Հայաստանի համայնքների միության հանրապետական խորհրդում յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ներկայացուցչների ընտրության ընթացակարգը

Կանոնադրության համապատասխան դրույթները

12.1. Միության Հանրապետական խորհուրդը (այսուհետ՝ Հանրապետական խորհուրդ) ձևավորվում և դրա կազմը ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով՝ հետեւյալ կարգով.

12.1.1. Միության անդամ յուրաքանչյուր քաղաքային համայնքի ղեկավար հանդիսանում է Հանրապետական խորհրդի անդամ,

12.1.2. Հանրապետական խորհրդի անդամ գյուղական համայնքների թիվը պետք է առնվազն հավասար լինի հանրապետական խորհրդի անդամ քաղաքային համայնքների թվին: Յուրաքանչյուր Ընդհանուր ժողովից առաջ գործող հանրապետական խորհուրդը Նախագահի առաջարկի հիման վրա սահմանում է յուրաքանչյուր մարզից Հանրապետական խորհրդում ընդգրկվելիք գյուղական համայնքների թիվը՝ յուրաքանչյուր մարզից՝ ոչ պակաս քան չորս և ոչ ավել քան ութ համայնքեր՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզում առկա համայնքների թիվը: Վերջնական որոշում ընունելուց առաջ Հանրապետական խորհուրդը իր առաջարկը քննարկում է գյուղական համայնքների ներկայացուցիչների հետ՝ հաշի առնելով նրանց կարծիքը:

12.1.3. Յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ղեկավարները՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, ընտրում են Միության Հանրապետական խորհրդի անդամության տվյալ մարզի գյուղական համայնքների թեկնածուներին: Մարզային ընտրությունների կազմակերպման կարգը մշակում և հաստատում է Հանրապետական խորհուրդը:

1. Ընտրության կազմակերպումը

Միության Հանրապետական խորհրդում յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ներկայացուցիչների ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման համար պատասխանատու է գործադիր տնօրենը[1]:

2. Թեկնածությունների առաջադրման կարգը

- ՀՀՄ-ի անդամների հաջորդ հերթական Ընդհանուր ժողովից առնվազն 25 օր առաջ Միության աշխատակազմը Միության անդամ բոլոր գյուղական համայնքներին ուղարկում է նամակ (փոստային և էլեկտրոնային տարբերակով)՝
  i. տեղեկացնելով նրանց Ընդհանուր ժողովի օրվա և Հանրապետական խորհրդում յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ներկայացուցիչների ընտրությունների կազմակերպման մասին,
  ii. տեղեկացնելով յուրաքանչյուր մարզ Հանրապետական խորհրդի կազմում ներկայացնող գյուղական համայնքների սահմանված թվի մասին,
  iii. առաջարկելով յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ղեկավարներին թեկնածություն առաջադրել իրենց մարզը Հանրապետական խորհրդում ներկայացնելու համար,
  iv. սահմանելով թեկնածությունների առաջադրման վերջնաժամկետ և տրամադրելով թեկնածությունների ներկայացման հասցե (փոստային և էլեկտրոնային):

---

[1] Եթե գործադիր տնօրենն այս գործընթացին առնչվող հնարավոր ֆինանսական կամ անձնական շահ ունի, ապա պետք է նախօրոք հայտնի այդ մասին, և Վարչությունը պետք է պատվիրակի ընտրության կազմակերպման գործառույթը որևէ անկախ անձի:

- Միության հանրապետական խորհրդում համապատասխան մարզի գյուղական համայնք ներկայացնելու համար համայնքի ղեկավարի թեկնածության առաջադրման յուրաքանչյուր հայտ պետք է ներկայացվի գրավոր (հնարավոր է նաև էլեկտրոնային փոստով)՝ հստակ նշումով, թե առաջադրումը որ մարզին է վերաբերվում:
- Առաջադրվող անձը պետք է լինի գյուղական համայնքի ղեկավար այն մարզում, որում գտնվող համայնքից կատարվել է առաջադրումը:
- Թեկնածությունների առաջադրման հայտերը ստանալուց հետո Միության աշխատակազմը պետք է կապ հաստատի բոլոր առաջադրված անձանց հետ (սա չի վերաբերվում ինքնաառաջադրման դեպքերին)՝ տեղեկացնելու համար, որ նրանց թեկնածությունն առաջադրվել է և ճշտելու ընտրություններին մասնակցելու վերջիններիս ցանկությունը:

3. **Ընտրության կազմակերպումը**
   - Ընդհանուր ժողովի գումարումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Միության աշխատակազմը Միության գյուղական համայնքներ ներկայացնող բոլոր անդամներին էլեկտրոնային փոստով ուղարկում է առաջադրված բոլոր թեկնածուների անուններն՝ ըստ մարզերի: Առաջադրված թեկնածուների ցանկը տեղադրվում է նաև միության Ինտրանետում:
   - Հանրապետական խորհրդում յուրաքանչյուր մարզի գյուղական համայնքների ներկայացուցիչների ընտրությունը տեղի է ունենում Միության անդամների Ընդհանուր ժողովի ընթացքում: Ընտրության ժամը հայտարարվում է Ընդհանուր ժողովի ժամանակ:
   - Եթե տվյալ մարզից առաջադրված թեկնածությունների թիվը հավասար է կամ ավելի քիչ այդ մարզի համար հանրապետական խորհրդում նախատեսված տեղերի թվից, ապա տվյալ մարզից առաջադրված բոլոր թեկնածուները համարվում են ընտրված:
   - Եթե տվյալ մարզից առաջադրված թեկնածուների թիվն ավելի քիչ է նախատեսվածից, ապա Ընդհանուր ժողովի օրը տվյալ մարզի գյուղական համայնքների ղեկավարները միաձայն համաձայնությամբ իրենց կազմից կարող են առաջադրել թեկնածու(ներ) (վերջին(ներ)իս համաձայնության դեպքում) տվյալ մարզի համար նախատեսված տեղերի քանակը լրացնելու նպատակով: Այս կարգով առաջադրված թեկնածուների անունները ևս պետք է ավելացվեն տվյալ մարզի ներկայացուցիչների ընտրության համար նախատեսված քվեաթերթիկի մեջ:
   - Եթե տվյալ մարզից առաջադրված թեկնածուների թիվը գերազանցում է այդ մարզի համար հանրապետական խորհրդում նախատեսված տեղերի թիվը, ընտրությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկության միջոցով: Ընդհանուր ժողովին մասնակվող գյուղական համայնքի յուրաքանչյուր ղեկավար կարող է միայն քվեարկել իր մարզի ներկայացուցիչների համար: Յուրքանչյուր գյուղական համայնքի ղեկավար կարող է քվերակել միայն մեկ թեկնածուի օգտին: Բոլոր քվեարկող անդամների քվեները հավասարազոր են:
   - Քվեարկությունից առաջ յուրաքանչյուր մարզ ներկայացնող գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից տրվում է տվյալ մարզից առաջադրված բոլոր թեկնածուների և նրանց ներկայացրած համայնքների անունները պարունակող մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացած յուրաքանչյուր անդամ պետք է ստորագրի նախապես կազմված ցուցակում իր անվան դիմաց և քվեաթեթիկը գցի իր մարզի անունը կրող քվեատուփի մեջ: Անդամներին տրվող քվեաթերթիկների թիվը, ըստ մարզերի, պետք

է արձանագրվի և քվերակության ավարտին համեմատվի յուրաքանչյուր մարզից քվերակությանը մասնակցած անդամների թվի հետ:

- Քվեարկության արդյունքները հաշվում և ամփոփում է գործադիր տնօրենի կողմից նշանակված երեք փորձառու, անկախ անձանցից բաղկացած ընտրական հանձնաժողովը: Թեկնածուներից յուրաքանչյուրը, ինչպես նաև գործադիր տնօրենը, կարող են ունենալ քվեարկության ընթացքին և քվեաթերթիկների հաշվման գործընթացին հետևող դիտորդներ:
- Ամենաշատ ձայները ստացած թեկնածուները (յուրաքանչյուր մարզի համար նախատեսված տեղերի թվով) համարվում են ընտրված: Ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր մարզի համար անցկացված ընտրության արդյունքների մասին տեղեկացնում է գործադիր տնօրենին: Գործադիր տնօրենը յուրաքանչյուր մարզի համար կազմում է հանրապետական խորհդի բոլոր ներկայացուցիչների ցուցակ՝ նշելով անդամների անուն ազգանունը, համայնքի անվանումը և համայնքի տեսակը (քաղաքային /գյուղական): Ընդհանուր ժողովի նախագահողն այնուհետև հայտնում է ժողովի մասնակիցներին յուրաքանչյուր մարզի համար ընտրությունների արդյունքները՝ կարդալով յուրաքանչյուր մարզից ընտրված գյուղական համայնքների ներկայացուցիչների անունները, և խնդրում է Ընդհանուր ժողովին մասնակցող Միության անդամներին հաստատել հանրապետական խորհրդի ամբողջական կազմը՝ Կանոնադրության հոդված 10.1.2-ի համաձայն:
- Այն դեպքում, երբ երկու թեկնածուներ հավաքում են հավասար քանակությամբ քվեներ, ընտրական հանձնաժողովի աղնամները պետք է գրեն երկու թեկնածուների անունները առանձին, նույն չափի թղթերի վրա, դրանք տեղադրեն տուփի մեջ և փոխանցեն Ընդհանուր ժողովի նախագահողին: Վերջինս առանց նայելու պետք է վերցնի թղթերից մեկը և հայտնի դրա վրա գրված թեկնածուի անունը որպես ընտրված նախագահ: